ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՊԸԾՁԲ-17/29»

ք. Երևան

<< 15>> մայիսի 20 17 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N2):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝ ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը. բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 15 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **6339000** (վեց միլիոն երեք հարյուր երեսունինը հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N2.1, 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքի Էրեբունի, Աջափնյակ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	Կատարող
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտիի փ. 1 ՀՎՀՀ 02593108 Կենտրոնական գանձապետարան	«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ ք. Երևան, Հալաբյան 59 Կոնվերս բանկ ՓԲԸ Հ/Հ 1930058863560100 ՀՎՀՀ 01213386
Գ.Չթոյան---------- (ստորագրություն) Կ.Տ.	Ա. Մարոնյան---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
« 15 » «մայիսի» 2017թ.կնքված
N «ԵՔ-ՊԸԾՁԲ-17/29» գնման պայմանագրի հավելված

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Չափաբաժնի անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
	Երեբունի վարչական շրջան	**Ծառայությունների ձեռքբերման ժամկետները նշված են չափաբաժիններում**
1	Լավագույն մարզական ընտանիք հանրապետական մրցույթ փառատոն	<<Լավագույն մարզական ընտանիք>> հանրապետական մրցույթ փառատոնը պետք է անցկացնել Երեբունի վարչական շրջանի հանրակրթական դպրոցների դահլիճներում **մայիսի 16-ից մինչև հունիսի 30-ը**,որի համար պետք է մրցավարական սպասարկող անձնակազմ՝ 1 գլխավոր մրցավար 5 օրով,1 գլխավոր մրցավարի տեղակալ 5 օրով, 10 մրցավար 5 օրով,1 քարտուղար 5 օրով : Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է մարզահագուստ՝ 24 մեծահասակի և 12 երեխայի համար միասնական սպորտային հագուստ - 80 %-ոց բամբակյա տաբատ, կարճաթև շապիկ և սպորտային գլխարկ:Ձևավորումը և գույնը պետք է համաձայնեցվի Երեբունի վարչական շրջանի հետ, M, S, L, XL, XXL չափսերի:
2	Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային փառատոն/ֆուտբոլ,վոլեյբոլ/տղաներ, աղջիկներ/,բասկետբոլ/տղաներ,աղջիկներ,հանդբոլ/տղաներ,աղջիկներ /,հեծանվավազք,մարզատրամաբանական խաղեր/շախմատ,շաշկի/ ներգրավելով սալյակավոր,հաշմանդամ երեխաներին	<<Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք>> համաքաղաքային բակային փառատոնը պետք է անցկացվի Երեբունի վարչական շրջանի բակերում **հուլիսի 1-ից օգոստոսի 1-ը**,որի համար պետք է մրցավարական սպասարկող անձնակազմ՝ 1 գլխավոր մրցավար 12 օրով, 1 քարտուղար 12 օրով, 12 մրցավար 12 օրով: Հաջորդ փուլի համար անհրաժեշտ է 15 հոգու համար նախատեսված 12 հատ ավտոմեքենա (տրանսպորտային միջոցը /արտասահմանյան արտադրության, ցանկացած գույնի/ պետք է լինի 2008 և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով, սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերի զսպանակները լինեն ամուր վիճակում), ուղղությունը Երեբունի վարչական շրջանից դեպի Սպարտակ մարզադաշտ հետադարձով: Միջոցառումն անցկացնելու համար անհարժեշտ է 60 անձի համար մարզահագուստ՝կիսասինթետիկ, կարճաթև սպորտային շապիկ կլոր վզով և կիսատաբատ ցանցկեն աստառով, շապիկների թիկունքի մասում գրված լինեն համարներ: Ձևավորումը և գույնը պետք է համաձայնեցվի Երեբունի վարչական շրջանի հետ, M, S, L չափսերի:
3	Նախազորակոչային և զորակոչային	Նախազորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղերի 1-ին փուլը

	տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր /նոնակի նետում, 8կգ-անոց ուսապարկով փոխանցումավազք,ձգումներ պտտափողից,կրոսավազք 1000մ.,հրաձգություն օդամղիչ հրացանով,ինքնաձիգի քանդում-հավաքում	պետք է անցկացվի Երեբունի վարչական շրջանի հանրակրթական դպրոցների դահլիճներում,իսկ 2-րդ փուլը Սպարտակ մարզադաշտում՝ **հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը,**որի համար պետք է մրցավարական սպասարկող անձնակազմ՝1 գլխավոր մրցավար 12 օրով,1 գլխավոր մրցավարի տեղակալ 12 օրով, 1 գլխավոր քարտուղար 12 օրով,1 քարտուղար 12օրով, 6 մրցավար 12 օրով:Միջոցառումն անցկացնելու համար անհարժեշտ է 24 անձի համար մարզահագուստ՝ 80%-ոց բամբակյա, երկարաթև վերնամասով և երկար տաբատով ու կարճաթև, կլոր վզով շապիկով: Ձևավորումը պետք է համաձայնեցվի Երեբունի վարչական շրջանի հետ, M, S, L, XL, XXL չափսերի:
4	Տարեվերջյան արդյունքների ամփոփում	2017թ. Երեբունի վարչական շրջանում անցկացված սպորտային միջոցառումների տարեվերջյան արդյունքների ամփոփումը պետք է կազմակերպել մինչև 400 հոգանոց դահլիճում,որի ընթացքում հաղթող մասնակիցները պետք է պարգևատրվեն և տրամադրվեն նվերներ՝35 անձի համար մարզահագուստ՝կիսասինթետիկ, կարճաթև սպորտային շապիկ կլոր վզով և կիսատաբատ ցանցկեն աստառով, շապիկների թիկունքի մասում գրված լինեն համարներ: Ձևավորումը և գույնը պետք է համաձայնեցվի Երեբունի վարչական շրջանի հետ, M, S, L չափսերի, 5հատ գավաթ՝ ոսկեգույն,երկաթյա,10 հատ շնորհակալագիր՝ որոկյալ, գունավոր,փայլուն, A 4 չափի, 15-16 օֆսեթ տպագրության:Միջոցառումը պետք է անցկացվի **մինչև դեկտեմբերի 1-ը:**
5	Երեխաների պաշպանության միջազգային օր	Երեխաների պաշպանության միջազգային օրվա միջոցառումը պետք է կազմակերպել Երեբունի վարչական շրջանի մանկապարտեզներում,որի իրականացման համար անհրաժեշտ է 30 հատ օղակ(օղակ- պլաստմասե, գունավոր),12 հատ ցատկապարան(ցատկապարան-ռետինե, բռնակները պլաստմասե, երկարությունը 1.5 մետր), 12 հատ դրոշակ (կարմիր դրոշակ-փոխանցումավազքի համար), 12 հատ բուլավա(բուլավա-պլաստմասե, գունավոր, պարան- ձգելու համար, հյուսված), 4 հատ ձգելու պարան(մեջտեղի մասում կարմիր նշագծով), 12 հատ գնդակ(Ֆուտբոլի կաշվե գնդակ - մանկապարտեզներին նվիրելու համար),12 հատ պատվոգիր(պատվոգրեր-մարզաձևի նշումներով, փայլատ,որակյալ, գունավոր, A 4 չափի, 15-16 օֆսեթ տպագրության):Միջոցառումը պետք է իրականացնել **մայիսի 29-ից մինչև հունիսի 2-ը:**
6	Ռազմամարզական խաղեր	Ռազմամարզական խաղերը պետք է կազմակերպել Երեբունի վարչական շրջանի դպրոցների մարզադահլիճներում,որի իրականացման համար անհրաժեշտ է՝ 1 գլխավոր մրցավար 24 օրով,1 գլխավոր մրցավարի տեղակալ 24 օրով, 16 մրցավար 24 օրով,1 բժիշկ

		24 օրով: Անհրաժեշտ է 15 հոգու համար նախատեսված 5 հատ ավտոմեքենա (տրանսպորտային միջոցը /արտասահմանյան արտադրության, ցանկացած գույնի/ պետք է լինի 2008 և ավելի բարձր թվականի արտադրության, տեխնիկական զննություն անցած, ապահովված անհրաժեշտ բոլոր սարքավորումներով /տաքացման և սառեցման համակարգով/, դեղարկղով, սրահը լինի խնամված, մաքուր, նստատեղերի զսպանակները լինեն ամուր վիճակում), ուղղությունը Երեբունի վարչական շրջանից դեպի Սպարտակ մարզադաշտ հետադարձով:Միջոցառումն անցկացնելու համար անհրաժեշտ է 8 հատ շապիկ –անդրավարտիք՝ կապույտ՝38-ից 40 (M և L) չափսի, 60% բամբակյա, 40% սինթետիկ,2 կտորից հավաքածու կարճաթև, Երեբունի վարչական շրջանի անունը կրող տարբերանշանով: Միջոցառումը պետք է իրականացնել **մայիսի 16-ից մինչև հունիսի 30-ը:**
	Աջափնյակ վարչական շրջան	
7	<<Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք>> համաքաղաքային բակային ավանդական փառատոն Ըստ կանոնադրության	<<Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք>> համաքաղաքային բակային ավանդական փառատոնը անցկացվում են 2փուլով՝ մայիս-հունիս ամիսներիններին վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, հանդբոլ, հեծանվավազք, շախմատ և շաշկի մարզաձևերից: Վոլեյբոլ մարզաձևին մասնակցում են 2005-2006թթ. ծնված աղջիկներից և պատանիներից կազմված բակային թիմերը: Թիմի կազմը 12մասնակից, 1մարզիչ, 1ներկայացուցիչ: Բասկետբոլ մարզաձևին մասնակցում են 2005-2006թթ. ծնված երեխաներից կազմված բակային թիմերը: Թիմի կազմը 12մասնակից, 1մարզիչ, 1ներկայացուցիչ: Ֆուտբոլ մարզաձևին մասնակցում են 2008-2009թթ. ծնված երեխաներից կազմված բակային թիմերը: Թիմի կազմը 12մասնակից, 1մարզիչ, 1ներկայացուցիչ:Հանդբոլ մարզաձևին մասնակցում են 2004-2005թթ. ծնված երեխաներից կազմված բակային թիմերը: Թիմի կազմը 12մասնակից, 1մարզիչ, 1ներկայացուցիչ: Հեծանվավազքին մասնակցում են 2006-2007թթ. ծնված երեխաները: Թիմի կազմը 3մասնակից և 1ներկայացուցիչ: Շախմատ մարզաձևին մասնակցում են 2007-2008 թթ. ծնված երեխաները: Թիմի կազմը 1մասնակից և 1 ներկայացուցիչ: Շաշկի մարզաձևին մասնակցում են 2007-2008 թթ. ծնված երեխաները: Թիմի կազմը 1մասնակից և 1 ներկայացուցիչ: 1-ին փուլի անցկացման, այդ թվում նաև 2-րդ եզրափակիչ փուլի անցկացման կազմակերպչական ծախսերն իրենց մեջ ներառում են 1-ին փուլի մրցավարական հանձնաժողովների օրապահիկի գումարը և 2-րդ եզրափակիչ փուլի թիմերի մասնակիցների օրապահիկի գումարը:

8	ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթը /Հունիս- հուլիս/	<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթն անցկացվելու է օրացուցային տարվա հունիս-հուլիս ամիսներին՝ 3 փուլով, 1-ին և 2-րդ փուլերը՝ նախնական, 3-րդ փուլը՝ եզրափակիչ: Մրցույթի 1-ին փուլում կարող են մասնակցել ցանկություն ունեցող բոլոր ընտանիքները, որոնք ունեն բժշկի թույլտվություն, յուրաքանչյուր ընտանիքի թիմի կազմը բաղկացած է 3 անձից /հայրը, մայրը և երեխան՝ անկախ սեռից/: Մրցույթն անցկացվում է երեք տարիքային խմբերով: 2-րդ եզրափակիչ փուլի մասնակից 9 ընտանիքներին տրամադրվում է 27 կոմպլեկտ մարզահագուստ:
9	Աջափնյակ վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն /Հունիսի 1-10/	Աջափնյակ վարչական շրջանի շախմատի բաց առաջնությունը անցկացվում է հունիսի 1-10 : Մասնակցում են դպրոցահասակ երեխաներից կազմված թիմերը: Միջոցառման հետ կապված կազմակերպչական ծախսերը իրենց մեջ ներառում են հաղթողների մրցանակների ծախսերը:
10	Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր /Հոկտեմբեր – նոյեմբեր/	Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերն անցկացվում են 4 փուլով, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Ռազմամարզական խաղերի մասնակցում են հանրակրթական դպրոցների 9-11-րդ դասարաններից ձևավորված հավաքական թիմերը: թիմի կազմը՝ 9 մարզիկ և 1 մարզիչ-ներկայացուցիչ: Ռազմամարզական խաղերի ծրագրում ներառված են հետևյալ մարզաձևերը՝ նռնակի նետում, 8կգ-անոց ուսապարկով փոխանցումավազք, ձգումներ պտտաձողից, կրոսավազք, հրաձգություն, ինքնաձիգի քանդում-հավաքում: Միջոցառման անցկացման կազմակերպչական ծախսերն իրենց մեջ ներառում են մասնակիցների հանդերձանքի ձեռքբերման ծախսերը:
11	<<Երևանի Աջափնյակ վարչական շրջանի գավաթ>> անունը կրող բաց մրցաշար /Նոյեմբեր/	<<Երևանի Աջափնյակ վարչական շրջանի գավաթ>> անունը կրող բաց մրցաշարը անցկացվում է նոյեմբեր ամսին: Մրցաշարը կանցկացվի ՀՀ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների ՄՊՄԴ-ների միջև, որոնց կազմում թույլատրվում է ընդգրկել 1999-2000 թթ. ծնված պատանիների և աղջիկների: Թիմերի կազմը՝ 12 մասնակից և 1 մարզիչ: Միջոցառման հետ կապված կազմակերպչական ծախսերը իրենց մեջ ներառում են մասնակիցների, ինչպես նաև մրցավարական և սպասարկող անձնակազմերի օրապահիկի ծախսերը

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ձեռք բերվող ծառայության անվանումը	**Նախատեսվում է գնել 2017թ. ընթացքում** Ծառայությունների ձեռքբերման ժամկետ է սահմանվում մինչև չափաբաժիններում նշված ժամկետները *Գումար*
	Էրեբունի վարչական շրջան	
1	Լավագույն մարզական ընտանիք հանրապետական մրցույթ փառատոն	694000
2	Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային փառատոն/ֆուտբոլ,վոլեյբոլ/տղաներ,աղջիկներ/,բասկետբոլ/տղաներ,աղջիկներ,հանդբոլ/տղաներ,աղջիկներ/,հեծանվավազք,մարզատրամաբանական խաղեր/շախմատ,շաշկի/ ներգրավելով սալյակավոր,հաշմանդամ երեխաներին	679000
3	Նախազորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր /նռնակի նետում, 8կգ-անոց ուսապարկով փոխանցումավազք,ձգումներ պտտափողից,կրոսավազք 1000մ.,հրաձգություն օդամղիչ հրացանով,ինքնաձիգի քանդում-հավաքում	394000
4	Տարեվերջյան արդյունքների ամփոփում	294000
5	Երեխաների պաշպանության միջազգային օր	294000
6	Ռազմամարզական խաղեր	629000
	Աջափնյակ վարչական շրջան	
7	<<Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք>> համաքաղաքային բակային ավանդական փառատոն Ըստ կանոնադրության / հուլիս/	1119000

8	ՀՀ նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթը /Հունիս 15- հուլիս/	334000
9	Աջափնյակ վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն /Հունիսի 1-10/	389000
10	Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր /Հոկտեմբեր – նոյեմբեր/	374000
11	<<Երևանի Աջափնյակ վարչական շրջանի գավաթ>> անունը կրող բաց մրցաշար /Նոյեմբեր/	1139000
	Ընդամենը	**6339000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108
Կենտրոնական գանձապետարան

Գ.Չթրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Կատարող

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930058863560100
ՀՎՀՀ 01213386

Ա. Մարոնյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
15.05.17թ. կնքված N ԵՔ-ՊԸՄՁԲ-17/29 գն ման
պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը		Ֆինանսավորման գումարը Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների ընդ որում									ԸՆԴԱՄՆԸՆԴ ՏԱՐԵԿԱՆ
			մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
Էրեբունի վարչական շրջան		Հ/Հ 900022600432										
1,-6	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ			1635200	1635200	2320800	2320800	2320800	2984000	2984000	2984000	2984000
Աջափնյակ վարչական շրջան		Հ/Հ 900052473452										
7,-11	սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ			740000	740000	1875300	1875300	1875300	3355000	3355000	3355000	3355000
	Ընդամենը			**2375200**	**2375200**	**4196100**	**4196100**	**4196100**	**6339000**	**6339000**	**6339000**	**6339000**

*Վճարման ժամանակացույցում գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական
գանձապետարան
ՀՎՀՀ 02593108

Գ.Չիրյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Պրեստիժ Լենդ ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930058863560100
ՀՎՀՀ 01213386

Ա. Մարոնյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2

<<____>> _____20 թ. կնքված N _____

ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ սպորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները '

N	Մատուցված ծառայության							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<15 _>>մայիսի _2017 թ.

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է <<Երևանի քաղաքապետարան>>* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ծառայությունների մատուցման >>* ձեռքբերման <<ԵՔ-ՊԸԾՁԲ-17/29>>* ծածկագրով պարզեցված** գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

1. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ
ք. Երևան, Հալաբյան 59
Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930058863560100
ՀՎՀՀ 01213386

Ա. Մարոնյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1930058863560100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01213386

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ 633900 / վեց հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր /

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում (տուժանք)

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ՊԸԾՁԲ-17/29

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*